

27/12/2013
համար 314 Ն

«ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՄԻԱՆԿԱԳ ՎՃԱՐԻ ՏԵՍՔՈՎ ՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵՏՍՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՆԿԱԳ ՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/08-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կանոնակարգը փոփոխվել է՝

Նպատակ ունենալով ապահովել մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման միասնական ընթացակարգ,

Հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, և

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Հաստատել «Կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարվելու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը» կանոնակարգ 10/08-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի
թիվ 314-Ն որոշմամբ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

Դավիթ Սարգսյան
«.....» 2013թ.

Արթուր Զավադյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/08

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ՏԵՍՔՈՎ ՎՃԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

• ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- Սույն կանոնակարգով կարգավորվում է կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ մասնակցի կողմից միանվագ վճարի տեսքով կենսաթոշակի ստացման դեպքում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից միանվագ վճարի կատարման կարգը:

• ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

1) **Կանոնակարգ 10/07՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային

տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ը հաստատելու մասին» թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07,

- Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

• ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Մասնակիցը «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 60-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միանվագ վճար ստանալու իրավունք ձեռք է բերում, եթե լրացել է մասնակցի կենսաթոշակային տարիքը և մասնակցի միջոցները, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում ամսական գումարը.
 - փոքր է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից կամ հավասար է դրան, կամ
 - գերազանցում է հիմնական կենսաթոշակի հնգապատիկը:

- **ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԸ**

- Մասնակիցն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված միանվագ վճար ստանալու համար մասնակիցների ռեեստրը վարողին Կանոնակարգ 10/07-ով սահմանված ձևով և կարգով ներկայացնում է՝ կենսաթոշակի տեսակի ընտրության դիմում:

- **ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԻԱՆՎԱԳ ՎՃԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

- Մասնակիցների ռեեստրը վարողը սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումը ստանալուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում կազմակերպում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումով նախատեսված չափով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումն ու մարման արդյունքում ստացված միջոցների միանվագ վճարումը սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումում նշված մասնակցի բանկային հաշվին:
- Սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումը ստանալուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում մասնակիցների ռեեստրը վարողը որոշում է ընդունում հատուցման դեպքի առկայության մասին, և հատուցման դեպքի առկայության պարագայում մասնակիցների ռեեստրը վարողը պարտադիր կուտակային կենսաթոշակը միանվագ վճարի տեսքով վճարելիս սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումով նախատեսված չափով մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա փայերի մարումից ստացված գումարին միացնում է օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով ստացած հատուցման գումարը:
- Միանվագ վճարը կատարվում է սույն կարգի 5-րդ կետով սահմանված դիմումով նախատեսված չափով:

